



սական շաղկապների հենց մեկնական իմաստը, սակայն յատկապես այն, թէ Մատթէոսի աւետարանի դասական գրաբարով թարգմանութեան այս շաղկապների մեկնական իմաստի զիմաց ի՛նչ ունի յունարէն քննական բնագիրը: Առաջին հայեացքից այս խնդիրը աւելորդ է թուում, քանի, որ ըստ համատարած կարծիքի, մեր դասական թարգմանիչները միանգամայն հարազատ են մնացել իրենց բնագրին. ուստի կարելի էր ենթադրել, որ բնագրի շաղկապը թարգմանել են հայերէն համապատասխան շաղկապով: Սակայն այստեղ իսկ յայտնում ենք, որ հաւանաբար բնագրի իմաստի եւ հայերէնի ոգու համեմատ, նրանց թարգմանութեան մէջ, գոնէ մեր տրամադրութեան տակ եղած երեք ձեռագրում եւ երեք գլխաւոր տպագրերում միշտ էլ, որ հայերէն թարգմանութեան մեկնական քե, եթե ու զի ստորադասական շաղկապները յունարէն քննական բնագրի նոյնիմաստ շաղկապներին են համապատասխանում, այլ յաճախ աւելացուել են այնտեղ, ուր չկան յունարէնում. գուցէ եւ հակառակն էլ է կատարուել, որ չենք ստուգել. այսպիսով կարելի է հարցադրել, թէ արդեօք հայերէն թարգմանութեան բոլոր քե, եթե ու զի մեկնական շաղկապները սկզբնական կամ Սահակ Մեսրոպական թարգմանութեան են պատկանել: Նկատելի է նաեւ, որ հայերէն թարգմանութեան մեկնական ստորադասական շաղկապներով ստորադաս նախադասութիւններ համապատասխանում են յունական բնագրի դերբայական դարձուածների, դիմաւոր կամ անորոշ դերբայ ստորդեպով նախադասութիւնների եւ այլն: Մեր կարծիքով, նման մանր քննութիւններ առաւել եւս կարող են նպաստել մեր հանճարեղ եւ գեղաճաշակ, ճշգրիտ եւ անզուգական թարգմանիչներին աշխատանքի տեսութեան եւ գործնականի լուսաբանմանը, ինչպէս եւ աւետարանների դասական թարգմանութեան գիտա-քննական բնագրի պատրաստմանը:

5. Մեր աշխատանքի աղբիւրները  
Համարակալում ենք հերթական թուերով, որոնց յղում են ստորեւ տրուող յապաւումները:

Ա. Մատթէոսի աւետարանի հայերէն բնագիր  
ա. Տպագիրներ

1. Աստուածաշունչ մատեան Հիմ եւ Նոր կտակարանաց, հրատ.՝ Հ. Յ. Զօհրապեան, Ս. Ղազար, 1805. ունի չնկարագրուած եւ յանուանէ չմատնանշուած ձեռագրերի այլընթերցումներ ըրի բաժին, որի տուեալները քե, եթե ու զի շաղկապների վերաբերեալ նկատի ենք առել:

2. Գիրք աստուածաշունչ, հրատ.՝ Հ. Ա. Բագրատունի, Ս. Ղազար, 1860, չունի տարբերակներ բաժին: Ձեռագրական հիմք ունի:

3. Աստուածաշունչ մատեան Հիմ եւ Նոր կտակարանաց, հրատ.՝ Ա. Մ. Գարագաշեան, Կ. Պոլիս, 1895 եւ Վիեննա, 1929: Ունի տարբերակների շատ համառօտ բաժին: Ձեռագրական ուղղակի հիմք չունի, հետեւել է նախորդ երկու հրատարակութիւններին, վերցնելով յունարէն բնագրին հարազատագոյն ընթերցումները. շատ աւելի մօտ է երկրորդ հրատարակութեան:

բ. Ձեռագրեր

4. Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Ձեռ. 6200, գր. 887 թ. (նախկին Լազարեան ճեմարանի ձեռագիր), լուսապատճէն հրատարակութիւն Գր. Խալատեանցի, Մոսկուա, 1899, որի տարբերակները արձանագրուած են հետեւեալ աշխատութեան մէջ՝ B. O. Künzle, L'Évangile en arménien ancien, I<sup>re</sup> partie: Edition, Berne, 1984:

5. Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Ձեռ. 2374, գր. 989 թ., Ֆր. Մակկերի լուսապատճէն հրատարակութիւն, Փարիզ, 1920, որի բնագիրը տառադարձուած է Բ. Օ. Քիւնզլէի նշուած աշխատութեան մէջ:

6. Վիեննայի Միխիթարեան միաբանութեան մատենադարանի Ձեռ. 608, գր. չ. ԺԱ. դ.<sup>15</sup>: Թերթերի կորստի պատճառով ձեռագիրը թերի է:

Բ. Մատթէոսի աւետարանի յունարէն բնագիր

7. The Greek New Testament, ed. by Kurt Aland ... Allen Wikgren, 1975. Բնագիրը քննական է:

<sup>15</sup> Շնորհակալութիւն ենք յայտնում Աբբահայր Գր. Մանեանին եւ Հ. Օ. Սեբուլեանին, որ սիրայօժար մեզ տրամադրեցին ձեռագրի լուսապատճէնը, որի մասին մեր կատարած ուսումնասիրութիւնը լոյս կը տեսնի Հանդէս ամսօրեայում:

8. Interlinear Greek-English New Testament, The Nestle Greek Text, by R. Alfred Marshall, 1976. Բնագիրը քննական է:

9. Interlinear Hebrew Greek English Bible, Vol. 4, The New Testament, by Jay Green, 1981, 1894 թ. F. H. A. Scrivener-ի հրատարակած բնագիր:

Գ. Գրաբար քարգմանութեան համաբարբառ

Մարտիրոս Մինասեան, Մատթէոսի աւետարանի լիակատար համաբարբառ (որ լոյս տեսաւ Հանդէս ամսօրեայում 1986-ին):

Ուրտ օգտակար է նաեւ հետեւեալ աշխատութիւնը՝ B. O. Künzle, L'Évangile en arménien ancien, II<sup>e</sup> partie: Lexique, Berne, 1984:

գ. Յապաւումներ. համարները յղում են վերեւում նշուած մեր աղբիւրների թուահամարներին. այբբենական կարգով՝

բ = 2, Գ = 3, Զ = 1, Զ1 = Զ-ի տարբերակների բաժին, է = 5, Մ = 4, Ն = 8, Ս = 9, Վ = 6, Ք = 7:

Սրանց տուեալները նշուելու են իրենց ժամանակագրական կարգով:

6. Թե, եթե, զի մեկնական շաղկապների վկայութիւնները փառելու մեր սկզբունքները Հայերէն թարգմանութեան փաստերը քաղում ենք մեր թ. 3, այսինքն Մ. Գարագաշեանի հրատարակութիւնից, սակայն ամէն դէպքում նշում ենք միւս երկու տպագիրների, Զ1-ի եւ մեր աղբիւրների երեք ձեռագրերի շաղկապական տարբերակները: Թե ու եթե շաղկապների (բառակերպի -ե) ուղղագրութեան հարցում հետեւում ենք մեր երեւանեան երկու ձեռագրերին. Վիեննայի ձեռագրում, որ գլխագրերով է, Ե եւ է տառերն անկարելի է տարբերակել, որով նկատի ենք առնում նրա միայն քե-ի ու եթե-ի տարբերակները: Մեր երեք տպագիրներում եւ Զ-ի այլընթերցումների բաժնում միշտ կարող ենք քե, եթե, որ միշտ արձանագրում ենք քե, եթե ձեւով: Նախադասութիւնների կէտադրութիւնը եւ գլխագրերի կիրառութիւնը միանգամայն տարբեր է մի կողմից մեր ձեռագրերում եւ միւս կողմից տպագիրներում. սակայն մեր երեք տպագիրներն էլ իրենց հերթին տարբերում են միմեանցից. այս պայմաններում լաւագոյն համարեցինք կիրարկել Մ. Գարագաշեանի կէտադրութեան եւ գլխագրերի կիրառութեան երեւանեան կանոնները: Մ. Գարագաշեանը գլխագրով է սկսել շաղկապներին յաջորդող առաջին բառը, եթէ երկրորդական նախադասութիւնը ուրիշ ուղղակի խօսքն է, կամ հրատարակիչն այդպէս է համարել:

Թե, եթե, զի շաղկապները նկատի ենք առնելու այս հերթականութեամբ: Թէեւ առաջին երկուսը նոյնիմաստ են մեկնական իմաստով, սակայն նախընտրելի է անջատաբար քննարկել, քանի որ հայերէն աղբիւրներում այլընթերցումներ կան:

Օգտագործում ենք յունարէն բնագրի մեր 7-րդ աղբիւրը, սակայն նշում ենք միւսների տարբերակները, եթէ կան շաղկապների վերաբերեալ:

Ա. Թե «Թէ, ՈՐ» ՇԱՂԿԱՊԻ ՅՈՒՆԱՐԷՆ ՀԱՄԱԶՕՐՆԵՐԸ

7. Մեկնական քե շաղկապի յունարէն համագործները

Ամբողջութեամբ քննելով Մատթէոսի աւետարանի դասական գրաբարով թարգմանութիւնից քաղած մեր բոլոր վկայութիւնները՝ նկատում ենք, որ յունարէն բնագրում դրան համապատասխանում է՝

- ա. 26 անգամ յն. ՕՒՍ ստորադասական շաղկապը, պարբ. 8-10.
- բ. 1 անգամ յն. ՆՎԱ ստորադասական շաղկապը, պարբ. 11.
- գ. 1 անգամ յն. ԵՆ «եթէ, թէ» ստորադասական շաղկապը, պարբ. 12.
- դ. 31 անգամ անշաղկապ է յունարէն բնագիրը, պարբ. 13-17:

Առանձին-առանձին քննութեան առնենք այս երեք կէտերը, որոնցից չորրորդը նուազ կարեւոր է, գուցէ ընդհակառակը, հայերէն բնագրի տեսակէտից:

ա. Հայ. քե «թէ, որ» = յն. ԾՒ

8. Յն. ԾՒ ստորադասական շաղկապի իմաստները

Յունարէն լեզուի ընդարձակ բառարանների համաձայն, ԾՒ ստորադասական շաղկապը ծա- գումով ԾՅՏԻՍ «որ» յարաբերական դերանունան չէզոք սեռի ձեւն է՝ որպէս ստորադասական շաղ- կապ գործածուած, ինչպիսին է լատ. quod մեկնական շաղկապը: Առանց շաղկապակից ուրիշ բառի գործածուելիս յն. ԾՒ շաղկապը մի քանի իմաստ ունի. «[թէ, որ] յատկապէս «ասել, կարծել, հաւատալ, գիտեմ, տեսնել» նշանակող բայերից յետոյ, «որովհետեւ», «քանի որ» «ինչո՞ւ» (անուղղակի հարցման դէպքում): Մեզ հետաքրքրողը «[թէ, որ] մեկնականն է այստեղ: Հայերէն թարգմանուել է նաեւ քե «թէ, որ». տե՛ս պարբ. 20:

9. Հայ. քե «թէ, որ», = յն. ԾՒ համապատասխանութեան վկայութիւնները

26 վկայութիւն ունենք<sup>16</sup>, որոնք նշելիս զանց ենք անում յիշեցնել յն. ԾՒ շաղկապը եւ Մատ- թէոս աւետարանգրի Մտթ ստորագրութիւնը, բաւարարուելով աւետարանի գլխի եւ տների համար- ներով: Վկայութիւնները մէջբերելուց յետոյ կը հանենք եզրակացութիւններ: Նշում ենք քե-ի տարբ- րեցումները.

1. Իբրեւ ետես շերովդէս, [թէ] խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ (Բ 16). Մ եթե:

2. Զի լցցի բան մարգարէիցն, [թէ] «նազովրեցի կոչեսցի» (Բ 23). Է եթե. մեր չակերտած ստորադաս նա- խաղասութիւնը շղատառ է օտար նորագոյն թարգմանութիւնների մէջ, ինչ որ խմբագրական միեւնոյն նշանակութիւնն ունի. սակայն կարեւորն այն է, որ յայտնի չէ մեկնաբաններին, [թէ] դրանք ո՞ր մարգարէներն են. ուստի մէջբերման ստոյգ աղբիւրը պարզ չէ:

3. Գրեալ է, [թէ] «Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո. . .» (Դ 6). Մ եթե, Զ1 եթէ. չակերտուածը մէջբերում է Սղմ Դ (ԴԱ) 11-12-ից:

4. Ասեմ ձեզ, [թե] ամենայն, որ հայի ի կին մարդ. . . (Ե 28). Մ եթե:

5. Գիտէ Հայրն ձեր երկնաւոր, [թէ] պիտոյ է ձեզ այդ ամենայն (Զ 32). Մ եթե:

6. Ասեմ ձեզ, [թե] ընդ ամենայն դատարկ բանի. . . տացեն համար (ԺԲ 36):

7. Ասեն, [թե] «Առաջաք ինչ իցէ» (ԺԴ 26). Մ եթե. յն. բնագրում իցէ ստորադասականի համադր- բայը սահմ. ներկայ է՝ ԵՏԻՄ. բնագրի քննական հրատարակութիւններ եւ օտար նորագոյն թարգ- մանութիւններ համաձայն են, որ չակերտուածը Յիսուսի աշակերտների ուղղակի խօսքն է:

8. Ասէին, [թե] «Հաց ոչ բարձաք» (ԺԶ 7):

9. Մի՛ ումեք ասացեն, [թե] նա է Քրիստոսն (ԺԶ 20). Մ եթե:

10. Սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն, [թե] պարտ է նմա երթալ յնրուսաղէմ (ԺԶ 21):

11. Ի միտ առին աշակերտքն, [թե] վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա (ԺԷ 13). Մ եթե, բացառաբար է-ով:

12. Զիցէ՞ ընթերցեալ ձեր, [թե] որ հաստատեացն, ի սկզբանէ արու եւ էզ արար զնոսա (ԺԹ 4). Մ եթե:

13. Համարէին, [թե] աւելի առնուցուն (Ի 10). Մ եթե:

14. Իբրեւ լուան, [թե] Յիսուս անցանէ, աղաղակեցին (Ի 30). Մ եթե:

15. Զիցէ՞ ընթերցեալ ձեր, [թե] «Ի բերանոյ տղայոց եւ ստնդիւնաց կատարեցեր զաւրհնութիւն» (ԻԱ 16). Մ վ. եթե, Զ1 Բ եթէ: Չակերտուածը մէջբերում է Սղմ Ը 8-ից:

16. Գիտացին, [թե] վասն նոցա ասաց (ԻԱ 45). Մ եթե:

17. Գիտէք, [թե] մերձ է ամառն (ԻԴ 32). Վ եթե:

18. Գիտաջի՛ք, [թե] մերձ է ի դուրս (ԻԴ 33). Մ եթե:

19. Զիա՞րդ լնուցուն Գիրք, [թե] այսպէս պարտ է լինել (ԻԶ 54). Մ եթե, Զ1 Բ եթէ:

20. Ուրացաւ երգմամբ, [թե] «Ոչ գիտեմ զայրն» (ԻԶ 72). Մ եթե. չակերտուածը ուրիշ ուղղակի խօսքն է:

<sup>16</sup> Այսուհետեւ մեր բոլոր բնագրային վկայութիւնները համարակալում ենք հերթականութեամբ եւ դրանք յիշեցնում իրենց թուահամարներով:

21. Սկսաւ նզովել եւ երդնուլ, [թե] «Ոչ գիտեմ զայրն» (ԻԶ 74). Մ եթե. ուրիշ ուղղակի խօսքի մէջբե- րում:

22. Յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի, զոր ասաց, [թե] «Մինչ չեւ հաւու խաւսեալ իցէ, երիցս ուրացիս զիս» (ԻԶ 75). Մ եթե. ուրիշ ուղղակի խօսք:

23. Տեսեալ Յուզայի. . . [թե] պարտաւորեցաւ. . . (ԻԷ 3):

24. Գիտէր, [թե] առ նախանձու մատնեցին զնա (ԻԷ 18). Մ եթե:

25. Տեսեալ Պիղատոսի, [թե] ոչինչ աւգնէ. . . (ԻԷ 24):

26. Ասացէ՛ք աշակերտացն նորա, [թե] «Յարեաւ, եւ հաճ յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա» (ԻԸ 7). ուրիշ ուղղակի խօսք:

10. Բերուած վկայութիւններից հանուած եզրակացութիւններ

Բերուած բնագրային վկայութիւնների ուսումնասիրութիւնը հանգեցնում է մի շարք եզրակա- ցութիւնների, որոնք վերաբերում են հայերէն բնագրի գրչագրական բնոյթին, թարգմանական հարազատութեանը եւ քե մեկնական շաղկապով երկրորդական կամ ստորադաս նախադասու- թեան կառուցուածքին ու շարահիւսակա պաշտօնին:

Ա. Հայերէն բնագրի գրչագրական անաղարտութեան բնոյթը, իհարկէ ինչ վերաբերում է քե շաղկապին՝ բերուած նախադասութիւններում. նկատելի են այլընթերցումներ: Մեր երեք տպա- գիրներում ու երեք ձեռագիրներում, ինչպէս նաեւ Յ. Զօհրապեանի հրատարակութեան միւս ձեռա- գիրներում նկատելի են քե ու եթե գրութիւնների միջեւ տատանումներ, միմեանց փոխարինում- ներ, սակայն, մեր կարծիքով, հնարաւոր չէ որոշել սկզբնական ընթերցուածը, քանի որ շաղկապի քե ու եթե ձեւերը նոյնիմաստ են, եւ հենց նոյնիմաստութիւնն է դուռ բացել այլընթերցումների, որ ամփոփում ենք հետեւեալ աղիւսակում:

Յն. ԾՒ = Հայ. քե-ի այլընթերցումները ձեռագիրներում եւ տպագիրներում

Ծան. 1. Ոչինչ չնշուած սիւնակում ընթերցումը քե կամ քէ է: 2. - նշանը Վ-ի սիւնակում նշանակում է, որ համապատասխան բնագրի թերթերն ընկել են ձեռագրից:

Ձեռագրեր		Տպագիրներ				Ձեռագրեր		Տպագիրներ						
Մ	է	Վ	Զ	Զ1	Բ	Գ	Մ	է	Վ	Զ	Զ1	Բ	Գ	
1	եթե						16	եթե						
2		եթե					17			եթե				
3	եթե			եթե			18	եթե						
4	եթե						19	եթե			եթէ	եթէ		
5	եթե						20	եթե						
6			-				21	եթե						
7	եթե						22	եթե						
8							23							
9	եթե						24	եթե						
10							25							
11	եթէ						26							
12	եթե													
13	եթե													
14	եթե													
15	եթե			եթէ	եթէ									
							Ընդհ.	18	1	1		3	2	26
														թե

Բ. Հայերէն քարգմանութեան հարազատութիւնը յունարէն բնագրին. 26 նախադասութիւններում յն. ՕՒՆ մեկնական շաղկապը թարգմանուել է ք-ե (երբեմն գուցէ եք-ե) շաղկապով, որը պահպանուել է գրչագրերում եւ անցել տպագրութիւններին: Սակայն պէտք էր ստուգել, թէ չկա՞ն արդեօք յունարէն բնագրի երկրորդական նախադասութիւններ, որոնց ՕՒՆ շաղկապը չի թարգմանուել հայերէն. եթէ պատահել է, ապա դա կարող էր տեղի ունեցած լինել նաեւ մեր 26 վկայութիւններից մէկում կամ միւսում, որի շաղկապը կարող է յետագայում աւելացուած լինել ինչ-որ վերանայողի կողմից ուղղւորուած: Յամենայն դէպս կարծում ենք, որ մեր նախադասութիւններում ք-ե (եք-ե) շաղկապի համապատասխանութիւնը յունարէն բնագրի շաղկապին միանգամայն գոհացուցիչ է:

Գ. Ստորագրա նախադասութեան կառուցումովը եւ պաշտօնը. մի քանի հարցեր կան:

ա) Թե՛ շաղկապի տեղը. դա նախադասութեան առաջին բառն է մեր 26 վկայութիւններում:

բ) Ստորագրա նախադասութեան ստորգեղարկը դիմաւոր բայ է. դասական բնագրերում հանդիպում է նաեւ անորոշ դերբայ: Այսպէս՝ Գ. Աւետիքեանը, առանց նկատի առնելու դասական գրաբարը, գրել է. «Շաղկապը ք-ե, գի, որպէս գի, իբր թարմատար կամ պատճառական սովորաբար պահանջին բայ դիմաւոր»<sup>17</sup>, ու բերել է հետեւեալ դասական օրինակը Գծ Ժե 38-ից. «Բայց Պաւղոս աղաչէր ք-ե գմեկնեալն ի նոցանէ. . . մի՛ առնու ընդ ինքեանս»: Այս նոյն դասական նախադասութիւնը բերուել է նաեւ «Քերականութիւն հայկազնեան լեզուի» ձեռնարկի հեղինակների կողմից հետեւեալ դիտողութեան համար. «Բայց կան գրոց մէջ աւելորդ շաղկապներ՝ որ ոչ զարդ են եւ ոչ ոյժ, այլ անկանոն յաւելուածք, որոնց հետեւութիւնն զգուշալի է» (էջ 460): Մեր կարծիքով, բերուած դասական օրինակում ք-ե կամ ք-ե շաղկապն ընդմիջարկութիւն է, այսինքն դասական թարգմանութիւնից չի գալիս հետեւեալ երկու պատճառներով: Նախ՝ յունարէն բնագրում չունի իր համապատասխան շաղկապը՝ Παύλος δὲ ἡείου, τὸν . . . μὴ συμπαράλαμβάνειν τοῦτον: Երկրորդ՝ Մատթէոսի աւետարանի նման նախադասութիւններում չունենք ք-ե շաղկապ. հմմտ. «Այլ ես ասեմ ձեզ ամենեւին մի՛ երդնուլ» (Մտթ Ե 34), «Այլ ես ասեմ ձեզ մի՛ կալ հակառակ չարին» (Մտթ Ե 39), «Զգոյ՛ լերո՛ւք ողորմութեան ձերում մի՛ առնել ատաղի մարդկան» (Մտթ Զ 1):

գ) Ստորագրա նախադասութեան ստորգեղարկ հաստատական կամ ժխտական բնոյթը. մեզ թուում է, որ սա էական չէ, եւ երկուսն էլ հանդիպում են մեր օրինակներում. հաստատականներն աւելի են, ժխտականները նշենք օր. 8, 20, 21, 25. երկուսն էլ կարող են միատեղ լինել՝ օր. 22:

դ) Ստորագրա նախադասութեան ստորգեղարկ բայի եղանակն ու ժամանակը. հաւանաբար սրանք էլ էական չեն, քանի որ հանդիպում են տարբեր եղանակներ ու ժամանակներ:

ե) Ստորագրա նախադասութեան բովանդակութիւնը. սա կարող է լինել ուրիշի ուղղակի խօսքի մէջ՝ բերում, որ կարելի է չակերտների մէջ առնել՝ օր. 2, 3, 7, 8, 15, 20-22, 26, կամ աւետարանի դէպքում կարող է լինել այս կամ այն չափով բառացի մէջբերում Հին կտակարանից՝ օր. 2, 3, 15, կամ էլ գրողը կամ խօսողը կարող է իր միտքն առաջ բերել (եւ չակերտների պէտք չկայ)՝ օր. 4, 6, 12, կամ էլ պատմողը կարող է ուրիշի միտքն առաջ բերած լինել, սակայն անուղղակիօրէն կամ առանց բառացիութեան, եւ չակերտներ պէտք չեն, ինչպէս մեր օրինակների մեծագոյն մասում:

զ) Ստորագրա նախադասութեան շարահիւսական պաշտօնը. այն կարող է լինել՝ ենթակայ, օր. 3 } գերագրա նախադասութեան բայը կրաւորական է. բացայայտիչ, օր. 2 }

ուղիղ խնդիր, որ ամենից յաճախականն է, օր. 1 եւ 4-26, ըստ որում գլխաւոր նախադասութեան ստորգեղարկ ներգործական սեռի բայ է.

վերաբերութեան անուղղակի խնդիր, օր. 19, որով գլխաւորի բայը կրաւորական սեռի է:

Թե՛ ստորագրա նախադասութիւնը կարող է, հաւանաբար, այլ պաշտօններ եւս ունենալ:

<sup>17</sup> Գ. Աւետիքեան, նշ. աշխ., էջ 541:

Դ. Գլխաւոր նախադասութեան բայի բերականական բնոյթը<sup>18</sup>. կարող է ունենալ քերականական տարբեր սեռեր եւ գործածուած լինել տարբեր եղանակներով ու ժամանակներով, որոնք, հաւանաբար, էական չեն այս տեսակի բարդ ստորագրական նախադասութիւնների կառուցուածքի տեսակէտից:

Ե. Թե՛ շաղկապի իմաստը. յայտնի է, որ արդի հայերէնում ք-ե ու որ մեկնական շաղկապներն իմաստային երանգ ունեն. եթէ երկրորդը հաստատական է, ապա առաջինը թէ՛ական, ոչ հաստատական է<sup>19</sup>: Ինչպէս կարող են ցոյց տալ մեր 26 վկայութիւնները, դասական գրաբարի ք-ե մեկնական շաղկապը չունի ժամանակակից հայերէնի լոկ երկբայական, ենթադրական, իրականութեանը չհամապատասխանող բնոյթը, որն իրականում ստորագրատող երկրորդական նախադասութեանն է, այլ այն կարող է համազօր լինել թէ՛ արդի որ-ին եւ թէ՛ ք-ին:

բ. Հայ. ք-ե «ք-ե, որ» = յն. նՎ

11. Այս համապատասխանութեան միայն մէկ վկայութիւն ունենք.

27. Զամենայն, զոր միանգամ կամիջիք, թե արացեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէ՛ք նոցա (է 12), Մ եթե. Վ-ում համապատասխան բնագրի թերթը կորել է յն. նՎ ստորագրական շաղկապի իմաստներից են «որպէսզի», «որ»: Տե՛ս նաեւ պարբ. 21, ուր նՎ թարգմանուել է եք-ե «թէ, որ»:

գ. Հայ. ք-ե «ք-ե» = յն. Ե՛

12. Այս համապատասխանութիւնը վկայուած է մէկ օրինակով. տե՛ս նաեւ պարբ. 22.

28. Երբմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասացես մեզ, թե դո՛ւ ես Գրիստոսն (ԻԶ 63), Մ եթե: Յն. Ե՛ ստորագրական շաղկապը գլխաւոր նախադասութիւնների ասացական բայերից յետոյ ներմուծում է անուղղակի հարցում արտայայտող ստորագրա նախադասութիւններ, որով այս է պատճառը, որ տուեալ երկրորդական նախադասութիւնը հարցական նշան չունի նորագոյն օտար թարգմանութիւններում, ոչ էլ հայ. Զ եւ Բ տպագրութիւնում, ի տարբերութիւն Գ-ի, ուր դո՛ւ ենք կարդում:

դ. Հայ. ք-ե «ք-ե, որ», յն. անշաղկապ

13. Վկայութիւնների տեսակներն ըստ յունարէն համագործնի

Մատթէոսի աւետարանում ունենք մեկնական ք-ե «թէ, որ» շաղկապով 31 երկրորդական նախադասութիւն, որոնց յունարէն համապատասխաններն իրենց բնագրում անշաղկապ են. ուստի ք-ե-ն անհրաժեշտ է համարուել հայ թարգմանիչների կողմից, եթէ երբեք բոլորն էլ հարազատ են մեր տրամադրութեան տակ եղած ձեռագրերում եւ տպագրութիւններում: Իհարկէ նշելու ենք տարբերակները: Քաղուած վկայութիւնները յունարէն բնագրում նոյնաբնոյթ չեն. հայերէնում ք-ե շաղկապով կառուցուած երկրորդական նախադասութիւնները դրանում կարող են լինել՝

1. ուրիշի ուղղակի խօսք կամ մէջբերում.
2. ուրիշի անուղղակի հարցում կիսահարցական յարաբերական դերանունով.
3. անշաղկապ ստորագրա:

Տե՛ս նաեւ պարբ. 23, ուր յունարէնի անշաղկապ թարգմանուել է եք-ե-ով:

<sup>18</sup> Բերուած 26 նախադասութիւնների բայերը հետեւեալներն են (նախադասութիւնների համարներով). ասել 4, 6, 7, 8, 9, 22, 26. գիտել 5, 16, 17, 18, 24. գրիմ 3. երգնուլ (ն.) 21. ընթեռնուլ (ն.) 12, 15. ի միտ առնուլ (ն.) 11. լնուլ (ն.) 2, 19. լսել 14. համարիմ (ն.) 13. ուրանալ (ն.) 20. տեսանել 1, 23, 25. ցուցանել 10:

<sup>19</sup> Տե՛ս վերեւում էջատակի ծան. 14-ի տեսական գրականութիւնը, ինչպէս նաեւ Մանուկ Աբղղիան, Հայոց լեզուի տեսութիւն, Եր., 1965, էջ 627:

1.

14. Թե-ով ստորադաս ուրիշի ուղղակի խօսք կամ մեջբերում<sup>20</sup>

29. Մի՛ համարիք ասել յանձինս, թե «Ունիմք մեք հայր զԱբրահամ» (Գ 9), Մ եթե. չակերտուածն ուրիշի մտածելակերպն է:

30. Գրեալ է, թե «Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ. . .» (Դ 4), Մ եթե. չակերտուածը մէջբերում է Երկ Ը 3-ից. «Զի յայտ արասցէ, թե ոչ հացիւ միայն. . .», որտեղ նոյնպէս թե ունենք, բայց ըստ յունարէն բնագրի ՕՒՆ չաղ կապի:

31. Գրեալ է, թե «Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո» (Դ 7). մէջբերում Երկ Զ 16-ից՝ «Մի՛ փորձեսցես զՏէր Աստուած քո. . .»:

32. Ասացաւ առաջնոցն, թե «Մի՛ սպանաներ» (Ե 21), Մ եթե. մէջբերում Եւր Ի 13-ից՝ «Մի՛ սպանաներ»:

33. Ասեմ սմա՛ «Ե՛րթ», եւ երթայ, եւ այլում՝ թե «Ե՛կ», եւ գայ, եւ ծառայի իմում՝ թե «Ա՛ր՛ա գայս», եւ առնէ (Ը 9), Վ. - Ինչո՞ւ հայերէնը թե չունի առաջին հրամայականից առաջ. միւս երկուսի հեռադրութիւնը ասեմ բայից բաւական էր արդեօք արդարացնելու երկու հրամայականներէն առաջ թե-երի առկա՞նքը: Հմմտ. 42:

34. Եւ ասեն, թե «Ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայելի» (Թ 33):

35. Ասէին, թե «Ի՛շխանաւն զիւաց հանէ դա զըեւս» (Թ 34), Մ եթե, Վ. -:

36. Ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, թե «Պատարագ է, զոր յինէն աւգտիցիս» (ԺԵ 6)<sup>21</sup>:

37. Իբրև ասաց, թե «Յաւտարաց», ասէ ցնա Յիսուս (ԺԷ 25)<sup>22</sup>, Մ եթե:

38. Ասէին, թե «Ի՛ոքա՛ յետինքդ, մի ժամ գործեցին» (Ի 11-12), Մ եթե:

39. Ասեն, թե «Զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ» (ԻԱ 20), Մ եթե:

40. Ասեմ ձեզ, թե «Ոչ եւս տեսանիցէք զիս» (ԻԳ 39):

41. Եւ ասիցեն, թե «Ես եմ Գրիստոսն» (ԻԴ 5), Մ եթե:

42. Եթե ասիցեն ձեզ՝ «Ահաւանիկ յանապատի է», մի՛ ելանիցէք, եւ՝ թե «Ահա ի շտեմարանս է», մի հաւատացէ՛ք (ԻԴ 26), Մ եթե. Ինչո՞ւ թե չկայ «ահաւանիկ»-ից առաջ. Հմմտ. վերեւում թ. 33:

43. Ասէին, թե «Մի՛ ի տաւնի աստ, զի մի խոովութիւն լինիցի ի ժողովրդեանն» (ԻԶ 5):

44. Գրեալ է, թե «Հարից զհովիւն, եւ ցրուեսցին ոչխարքն հաւտին» (ԻԶ 31), Մ եթե. մէջբերում Զաք ԺԳ 7-ից. «Հարից զհովիւն, եւ ցրուեսցին խաչինքն. . .»:

45. Ասէին, թե «Աս ասէր՝ Կարող եմ քակել գտածարն. . .» (ԻԶ 61). Մ եթե:

46. Ասէ, թե «Ոչ գիտեմ՝ զի՛նչ խաւսիսդ» (ԻԶ 70), Մ եթե:

47. Գրեալ զվնաս նորա, թե «Այս է Յիսուս՝ թագաւորն Հրէից» (ԻԷ 37), Մ եթե:

48. Ասէր, մինչ կենդանին էր, թե «Յետ երից աւուրց յառնեմ» (ԻԷ 63), Մ եթե:

49. Ասիցեն ժողովրդեանն, թե «Յարեաւ ի մեռելոց» (ԻԷ 64):

50. Ոչ ասեմ քեզ, թե «Մինչեւ յեւթն անգամ», այլ. . . (ԺԸ 22), Մ եթե. կարելի է ենթադրել, որ այս նախադասութեան մէջ խօսողն իր միտքն է մէջ բերել ուղղակի ձեւով:

<sup>20</sup> Յունարէն բնագրի 7 եւ 9 քննական տպագիրներում գլխաւոր համարելի նախադասութեան վերջին բառից յետոյ գրուել է ստորակէտ, եւ յաջորդ բառն սկսուել է փոքրատառով, իսկ 8 հրատարակութեան մէջ (,) -ի փոխարէն ունենք (.) մանուկներում, որոնք սովորաբար անշաղկապ ստորադաս նախադասութեան մեծատառով: Օտար նորագոյն թարգմանութեան տպագիրներում տնահամարը 5 է:

<sup>21</sup> Յունարէն տպագիրներում տնահամարը 5 է:

<sup>22</sup> Յունարէն տպագիրներում տնահամարը 26 է:

2.

15. Թե-ով ստորադասն անուղղակի հարցում է կիսահարցական յարաբերականով

Հետեւեալ ստորադաս նախադասութիւններում ուրիշի անուղղակի հարցումը չաղ կապուած է թե-ով եւ ունի կիսահարցական մի դերանուն՝ ո՛ր, զի՛նչ, ո՛, ո՛րպէս. ստորադասների համագործնորդ յունարէն բնագրում կէտադրական ոչ մի նշանով տրոհուած չեն.

51. Մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զի՛նչ ուտիցէք կամ զի՛նչ ըմպիցէք, եւ մի՛ վասն մարմնոց ձերոց, թե զի՛նչ ազանիցիք (Զ 25), Մ է Վ եթե. հարց է առաջանում, թէ ինչո՞ւ թե չաղ կապը չի դրուել առաջին զի՛նչ-ից առաջ, քանի որ երեք զի՛նչ-երը համադաս են: Տե՛ս նաեւ թ. 46 ու 53:

52. Հարցանիցէք, թե ո՛ր է ի նմ արժանի (Ժ 11), Մ եթե, Վ. -:

53. Մի՛ հոգայցէք, թե ո՛րպէս կամ զի՛նչ խաւսիցիք (Ժ 19), Մ եթե, Վ. -:

54. Խորհուրդ առին զնմանէ, թե ո՛րպէս կորուսցեն զնա<sup>25</sup> (ԺԲ 14), Վ. -:

55. Խորհուրդ արարին զնմանէ, թե ո՛րպէս<sup>24</sup> զնիցեն նմա որոգայթ (ԻԲ 15), Մ եթե:

3.

16. Թե-ով ստորադաս, յն. անորոշ դերբայ հայց. ենթակայով

Անորոշ դերբայ ստորոգեալով եւ հայցական հոլով ենթակայով ստորադաս նախադասութիւնները գործածուել են նաեւ դասական գրաբարում, ինչպէս աւետարաններում, բայց սահմանափակ թիւով, իսկ հետեւեալ օրինակներում յունարէնի այդպիսի նախադասութիւնները հայերէն քանակով, իսկ հետեւեալ օրինակներում յունարէնի այդպիսի նախադասութիւնները հայերէն թարգմանուել են զիմաւոր բայ-ստորոգեալով եւ ուղղակի հոլովով դրուած ենթակայով. դրանք չարահիւսական պաշտօնով ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւններ են<sup>25</sup>.

56. Զո՞ք որ ասեն զինէն մարդիկն, թե իցէ Որդի մարդոյ (ԺԶ 13), Մ եթե, εἶναι τὸν υἱόν. . ., esse filium:

57. Իսկ դուք զո՞ք ասէք զինէն, թե իցեմ (ԺԶ 15), με λέγετε εἶναι, me esse dicitis.

58. Որ ասէին, թե չիք յարութիւն (ԻԲ 23), μὴ εἶναι ἀνάστασιν, non esse resurrectionem.

59. Որ ասէին, թե չիք յարութիւն թարգմանութիւններում չիք յարութիւնը ուրիշի ուղղակի յունարէն բնագրում եւ նորագոյն թարգմանութիւններում չիք յարութիւնը խօսք չի համարուել:

17. Ծան.- Թե-ով ստորադաս, յուն. անշաղկապ ստորադաս

Հետեւեալ նախադասութեան ստորադասը չենք կարող համարել ուրիշի ուղղակի խօսք եւ դասել մեր պարբ. 14-ի մէջ.

59. Նա պատասխանի ետ եւ ասէ. «Ամէն ասեմ ձեզ, թե ոչ գիտեմ զձեզ» (ԻԵ 12), Մ 21 եթե. թե-ով ստորադասը յունարէնում զիմաւոր ստորոգեալով անշաղկապ ուղիղ խնդիր, անշուշտ երկրորդական նախադասութիւն է, գերադասից ստորակէտով բաժանուած:

18. Եզրակացութիւններ

Ա. Ստորադաս նախադասութեան տեսակետից

ա. Թե մեկնական չաղ կապը առաջին բառն է:

<sup>25</sup> Թե որպէս-ի համագործ յունարէն բնագրում սովորաբար πῶς «ինչպէս» բառն է, ինչպէս Մտթ Ժ 19-ում, Մկ ԺԱ 18-ում՝ «Եւ խնդրէին, թե որպէս կորուսցեն զնա», իսկ Մտթ ԺԲ 1-ում (եւ ԻԲ 15-ում) ὅπως բառն է, որ ըստ բառարաններէ բազմիմաստ է՝ «այնպիսի ձեւով որ» ու «գիտեմալ, ասել, բացատրել, չգիտեմալ, ինքն իրեն հարց տալ» նշանակող «ինչպէս», ի՛նչ ձեւով», որին յաջորդում է խորհրդակցական բնույթի ստորադասական, ինչպէս մեր նախադասութեան մէջ: Հայ թարգմանիչները կարողացել են ճիշտ իմաստն բնութիւն, ինչպէս լատիներէնի թարգմանիչը՝ «quomodo (ինչպէս) perderent eum», արդի ռուսերէնի թարգմանիչը՝ «НАН БЫ ПОГУБИТЬ ЕГО». իսկ Ֆրանսերէն նորագոյն թարգմանութիւնները նախադասութիւնը նպատակի պարագայ է քանի որ յունարէնի չաղ կապը թարգմանուել է «որպէսզի» կամ «միջոցներէ մասին»:

<sup>24</sup> Էջատակի մեր ծան. 23-ը վերաբերում է նաեւ այս թե որպէս-ին:

<sup>25</sup> Անորոշ դերբայով նախադասութիւններէ մասին տես Գերակազմութիւն հայկազնեան լեզուի, էջ 217:



- 65. Ձեմ բառական, եթե ընդ յարկաւ իմով մտցես (Ը 8), Վ -:
- 66. Այլ զի գիտասջիբ, եթե իշխանութիւն ունի Որդի մարդոյ . . (Թ 6), Վ -:
- 67. Հաւատա՞յք, եթե կարող եմ առնել ձեզ զայր (Թ 28), Վ -:
- 68. Մի՛ համարիք, եթե եկի արկանել խաղաղութիւն (Ժ 34), Վ -:
- 69. Ո՞չ իմանայք, եթե ամենայն, որ մտանէ ի բերան, յորովայն երթայ (ԺԵ 17):
- 70. Զի՞ խորհիք . . . եթե հաց ոչ ունիք (ԺԶ 7), Մ Զ թե:
- 71. Զիա՞ ըդ ոչ իմանայք, եթե ոչ վասն հացի ասացի ձեզ (ԺԶ 11):
- 72. Յայնժամ ի միտ առին, եթե ոչ ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ . . . (ԺԶ 12):
- 73. Իբրեւ լուան, եթե պապանձեցոյց զաղուկեցիսն . . . (ԻԲ 34):
- 74. Ապա ուրեմն վկայէք զանձանց, եթե որդիք էք այնոցիկ . . . (ԻԳ 31), է քե:
- 75. Գիտէի՞ր, եթե հնձեմ . . . (ԻԵ 26), է Վ Զ Բ քե:

բ. Թե-ով ստորադաս խօսողի ուղղակի խօսք

Չակերտներն աւելորդ են.

- 76. Այլ ես ասեմ ձեզ, եթե ամենայն, որ բարկանայ . . . (Ե 22):
- 77. Բայց ես ասեմ ձեզ, եթե ամենայն, որ արձակէ զկին իւր . . . (Ե 32):
- 78. Ասացից ցնոսա, եթե ոչ երբեք զխտէի զձեզ (է 23), Վ -:
- 79. Ասեմ ձեզ, եթե երկրին Սողոմազուոց զիւրազոյն լիցի . . . (ԺԱ 24), Վ -:
- 80. Ամէն ասեմ ձեզ, եթե ոչ անցցէ ազգս այս . . . (ԻԴ 34):

գ. Թե-ով ստորադաս ուրիշի ուղղակի խօսք

- 81. Զիա՞ ըդ դպիրքն ասեն, եթե «Նղիայի նախ պարտ է գալ» (Ժէ 10):
- 82. Ասասջի՛ք, եթե «Տեսուն իւրեանց պիտոյ են» (ԻԱ 3):
- 83. Ասաց, եթե «Աստուծոյ Որդի եմ» (Իէ 43):
- 84. Ասասջի՛ք, եթե «Աշակերտքն նորա . . . գողացան զնա» (ԻԸ 13):

(բ)

21. Յն. ի՛να = հայ. եթե «թէ, որ»

Յունարէն շաղկապի իմաստները տե՛ս պարբ. 11-ում, ուր այն թարգմանուել է նաեւ քե:

85. Ոչ են կամք առաջի Հաւր իմոյ . . . եթէ կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ (ԺԸ 14). պարբ. 11-ի գլխաւոր նախադասութեան բայն էլ կամական մնոյթի է, բայց դրանում ստորադասը շաղկապուել է քե-ով, եթե երբեք այս քե ու եթե ձեւերը հաւասարաչափ հարազատ են եղել սկզբնապէս:

(գ)

22. Յն. ει = հայ. եթե «թէ, որ»

Յունարէն շաղկապի իմաստը տե՛ս պարբ. 12-ում, ուր թարգմանուել է նաեւ քե, եթե երբեք երկուսն էլ մաշտոցեան են: Հետեւեալ վկայութիւններում եւս ստորադասն արտայայտում է ուրիշի անուղղակի հարցումը եւ ուղիղ խնդիր է.

- 86. Ասեն, եթե, պա՛րտ իցէ ի շաբաթու բժշկել (ԺԲ 10):
- 87. Ասէին, եթե արժան իցէ ումեք արձակել զկին իւր (ԺԹ 3):
- 88. Տեսցուք, եթե գա՛յ Նղիա փրկել զնա (Իէ 49):

23. Յն. անշաղկապ ստորադաս, հայ. եթե-ով

Նոյնպիսի թարգմանութիւն, բայց քե-ով՝ տե՛ս պարբ. 13-ում.

89. Ապաքէն ասացաւ, եթե «Որ արձակիցէ զկին իւր, տացէ նմա զարձակմանն» (Ե 31), մէջբերում Երկ ԻԴ 1-ից՝ «Գրեցցէ նմա զիւր ապահարզանի եւ տացէ ի ձեռս նորա . . .»: է՛Վ քե:

24. քե «թէ, որ»-ի տարբերակները

Չեռագրեր			Տպագրեր				
Մ	է	Վ	Զ	Զ1	Բ	Գ	
60	թե						
61							
62							
63		թե				թե	
64	թե						
65							
66							
67							
68							
69				թե			
70							
71							
72							
73							
74		թե		թե		թե	
75		թե		թե			
76							
77							
78							
79							
80							
81							
82							
83							
84							
85							
86							
87							
88							
89		թե		թե			
Ընդհ.	2	4	2	3	1	2	30 եթե

25. Եզրակացութիւններ

Բնագրային վկայութիւնները ցոյց են տալիս, որ մեկնական թե շաղկապով ստորադասուած երկրորդական նախադասութիւնները իրենց բոլոր կողմերով նոյնանման են եթե-ով ներմուծուածներին, որոնց վերաբերեալ եզրակացութիւնները տե՛ս պարբ. 18-ում: Եթե մեկնական շաղկապն էլ թե-ի պէս կարող է ունենալ թէական եւ իրական իմաստ (տե՛ս պարբ. 10, Ե):

Գ. Զի «ՈՐ» ՇԱՂԿԱՊԻ ՅՈՒՆԱՐԷՆ ՀԱՄԱԶՕՐՆԵՐԸ

26. Հայ. գի շաղկապով ստորադասների յունարէն համագործերը

Դրանք կարող են լինել.

ա. Յն. ՕՒԼ շաղկապով ստորադասներ, 30 անգամ, պարբ. 27.

բ. Յն. ԻՆՎ շաղկապով ստորադասներ, 7 անգամ, պարբ. 28.

գ. Յն. կիսահարցական յարաբերականով անշաղկապ ստորադաս, 1 անգամ, պարբ. 29, ա.

դ. Յն. անշաղկապ, դիմաւոր բայ-ստորոգեալով ստորադաս, 5 անգամ, պարբ. 29, բ.

ե. Յն. դերբայական դարձուած, 2 անգամ, պարբ. 29, գ.:

Ինչպէս տեսնում ենք, յունարէն համագործերի տեսակէտից մեկնական եթե, թե եւ գի ստորադասական շաղկապները նոյնանիշ են, բացառութեամբ յն. ԵՆ շաղկապի, որ թարգմանուել է թե-ով (պարբ. 12):

Զի մեկնական շաղկապը այլընթացումներ չունի ձեռագրերում եւ տպագիրներում:

ա. Հայ. գի «որ» = յն. ՕՒԼ

27. Վկայութիւնները

- 90. Ասեմ ձեզ, գի կարող է Աստուած. . . (Գ 9):
- 91. Բայց ասեմ ձեզ, գի եթե ոչ առաւել ուցու արդարութիւն ձեր. . . (Ե 20):
- 92. Լուարուք, գի ասացաւ. . . (Ե 21, 27, 33, 38, 43):
- 93. Հայեցարո՛ւք ի թոչունս երկնից, գի ոչ վարեն (Զ 26):
- 94. Ասեմ, գի եւ ոչ Սողոմովն զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ (Զ 19):
- 95. Ասեմ ձեզ, գի բազումք յարեւելից. . . եկեցեն (Ը 11):
- 96. Զիցէ՞ ընթերցեալ ձեր, գի ի շաբաթու քահանայքն ի տաճարին պղծեն զշաբաթն (ԺԲ 5):
- 97. Ամէն ասեմ ձեզ, գի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան. . . (ԺԳ 17):
- 98. Գիտե՞ս, գի փարիսեցիքն իբրեւ լուան. . . (ԺԵ 12):
- 99. Ամէն ասեմ ձեզ, գի իցեն ոմանք. . . (ԺԶ 28):
- 100. Ասեմ ձեզ, գի Եղիա եկեալ իսկ է (ԺԷ 12):
- 101. Ասեմ ձեզ, գի հրեշտակք նոցա յերկինս հանապաղ տեսանեն. . . (ԺԸ 10):
- 102. Ամէն ասեմ ձեզ, գի ուրախ լինի (ԺԸ 13):
- 103. Ասեմ ձեզ, գի ամենայն, որ արձակէ զկին իւր. . . (ԺԹ 9):
- 104. Ամէն ասեմ ձեզ, գի դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւն Աստուծոյ (ԺԹ 23):
- 105. Ամէն ասեմ ձեզ, գի դուք, որ եկիք զկնի իմ. . . (ԺԹ 28):
- 106. Գիտէք, գի իշխանք ազգաց տիրեն նոցա (Ի 25):
- 107. Ամէն ասեմ ձեզ, գի մաքսաւորք. . . յառաջեցեն քան զձեզ (ԻԱ 31):
- 108. Ասեմ ձեզ, գի բարձրի ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ (ԻԱ 43):
- 109. Գիտեմք, գի ճշմարիտ ես (ԻԲ 16):
- 110. Ամէն ասեմ ձեզ, գի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցէ զնա (ԻԳ 47):
- 111. Գիտէք, գի յետ երկուց աւուրց զատիկ լինի (ԻԶ 2):
- 112. Ամէն ասեմ ձեզ, գի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս (ԻԶ 21):
- 113. Ամէն ասեմ ձեզ, գի յայսմ գիշերի. . . երիցս ուրացիս զիս (ԻԶ 34):
- 114. Յիշեցաք, գի մոլ որեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թե «Յետ երից աւուրց յառնեմ» (ԻԷ 63):
- 115. Գիտեմ, գի զՅիսուս զխաչելեալն իսնդրէք (ԻԸ 5):

Ծան. – Հետեւեալ նախադասութեան մէջ ստորադասը հաւանաբար նպատակի պարագայ է, եւ, ուստի, գի շաղկապը նշանակում է «որպէսզի». Աղաչեցին զնա, գի զնասցէ ի սահմանաց նոցա (Ը 34):

բ. Հայ. գի «որ» = յն. ԻՆՎ

28. Վկայութիւնները

116. Ասա՛, գի քարինքս այտքիկ հաց լինիցին (Դ 3):

117. Սաստեաց նոցա, գի մի յայտնեացեն զնմանէ ումեք (ԺԲ 16). Թէեւ գրաբարի բառարանները աստեղ բայի քերականական սեռը չէզոք են նշանակել, բայց այս բայը ունի նաեւ սաստեկութեամբ հրամայել, արգելել իմաստը, որոնք ուղղի խնդիր են պահանջում, թէկուզ որպէս երկրորդական նախադասութիւն, ինչպէս այստեղ եւ այլ ուր:

118. Սաստեաց աշակերտացն, գի մի՛ ումեք ասացեն (ԺԶ 20):

119. Ասա՛, գի նստցին. . . (Ի 21):

120. Ամբոխն սաստեաց նոցա, գի լուսեցեն (Ի 31):

121. Զի՞նչ կամիք, գի արարից ձեզ: 33 Ասեն ցնա. «Տէ՛ր, գի բացցին աչք մեր» (Ի 32–33):

122. Ասացէ՛ք եղբարցն իմոց, գի երթիցեն ի Գալիլեա (ԻԸ 10):

Ծան. – Զի շաղկապով ստորադաս որոշ նախադասութիւններ կարող են համարուել ուղղի խնդիր կամ նպատակի պարագայ, որի դէպքում գի նշ. «որպէսզի»:

գ. Հայ. գի-ով ստորադաս = յն. անշաղկապ համագործ

29. Յունարէն համագործերի տեսակները

ա) Կիսահարցական յարաբերական դերանունով անշաղկապ ստորադաս նախադասութիւն.

123. Ամէն ասեմ ձեզ, գի ո՛ւր եւ քարոզեցի աւետարանս այս. . . իսաւսցի (ԻԶ 13). յն. ստորադաս նախադասութիւնն սկսւում է հայ. ուր եւ-ին համագործ ՕՍՕՍ ԵՃՆ «ո՛ւր էլ որ» բառերով:

բ) Հայ. գի-ով ստորադասի դիմաց յունարէն բնագիրն ունի անշաղկապ ստորադաս, դիմաւոր բայ ստորոգեալով (ստորադասական եղանակով դրուած) երկրորդական նախադասութիւն.

124. Կամի՞ս, գի երթիցուք. . . (ԺԳ 28):

125. Զի՞նչ կամիք, գի արարից ձեզ (Ի 32):

126. Ո՛ւր կամիս, գի պատրաստեցուք քեզ ուտել զգատիկն (ԻԶ 17):

127. Զո՞ կամիք յերկուց աստի, գի արձակեցից ձեզ (ԻԷ 17, 21):

գ) Հայ. գի-ով ստորադասի դիմաց յունարէն բնագիրն ունի դերբայական դարձուածներ.

128. Ետես, գի գոքանջ նորա անկեալ դէնք (Ը 14), βεβλημένον:

129. Տեսանէին, գի համերք իսաւսէին (ԺԵ 31), λαλοῦντας:

30. Եզրակացութիւն

ա) Գլխաւոր նախադասութիւնների բայերը ներգործական սեռի են, ուստի եւ գի-ով ստորադասները ուղղի խնդիր են: Սակայն, բացառուած չէ, որ երկրորդական նախադասութիւնները այլ պաշտօն ունենան, օրինակ՝ ենթակայ լինեն, եթէ գլխաւորի բայն ուրիշ սեռի լինի, օրինակ՝ կրաւորական: Գերակշռում է ասել բայը:

բ) Բոլոր ստորադաս նախադասութիւնների առաջին բառը գի մեկնական շաղկապների իմաստի մէջ այն տարբերութիւնը կայ, ինչ արդէ հայերէնում թե-ի ու որ-ի միջեւ: Աշխարհաբարի իմաստային երանգը

գ) Մի կողմից եթե ու թե, միւս կողմից գի մեկնական շաղկապների իմաստի մէջ այն տարբերութիւնը կայ, ինչ արդէ հայերէնում թե-ի ու որ-ի միջեւ: Աշխարհաբարի իմաստային երանգը, թե շաղկապով կապակցուած են այն խօսքերը, լաւագոյնս ձեւակերպել է Մանուկ Աբեղեանը. «Թե շաղկապով կապակցուած են ասուած, եւ կամ որոնց բովանդակութիւնը որոնք կարծիքով, երկբայութեամբ ու ենթադրութեամբ են ասուած, եւ կամ շաղկապով են կապակցուած համապատասխան չէ իրականութեանը. մինչդեռ նոյն խօսքերը, երբ որ շաղկապով են կապակցուած համապատասխան չէ իրականութեանը»:

